ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 հոկտեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

134
(2984)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԺ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՆՐԱ ՔԱՎՈՐԸ 14 ՄԼՆ ԴՐԱՄ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ ՕՐԱԹԵՐԹԻՑ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն ու նրա շրջապատը թիրախավորել են «Ժողովուրդ» օրաթերթին:

Նա եւ իր որդու քավորը օրաթերթից պահանջում են ընդհանուր 14 մլն դրամի փոխհատուցում:

Ալեն Սիմոնյանը դատական հայց է ներկայացրել «Ժողովուրդ» օրաթերթի դեմ, քանի որ մենք հրապարակել ենք իր եղբոր տնօրինության տակ գտնվող «ԵվրոԱսֆալտ» ընկերության մասին, որը ՀՀ ՏԿԵՆ-ից ստացել էր ճանապարհների կառուցապատման դրամաշնորհ: Ավելի ուշ պարզվեց, որ Ալեն Սիմոնյանի եղբայր Կառլեն Սիմոնյանը փաստաթղթերով այլեւս այդ ընկերության հետ առնչություն չունի. դուրս է եկել աշխատանքից: Ամենայն հավանականությամբ դա եղել է մամուլի ճնշման ներքո:

Այսպիսով՝Ալեն Սիմոնյանը այս հրապարակման համար «Ժողովուրդ» օրաթերթից հայցում է 2 մլն դրամի փոխհատուցում:

Իսկ ահա Ալեն Սիմոնյանի որդու կնքահայր Էդգար Ավագյանը, որը «Պալլադա Ծաղկաձոր» ՍՊԸ-ի բաժնետերերից մեկն էր, այդ ընկերության անունից հայց է ներկայացրել «Ժողովուրդ» օրաթերթի դեմ եւ պահանջում է 12 մլն ՀՀ դրամի փոխհատուցում:

Պատճառը «Ժողովուրդ» օրաթերթի այն հրապարակումն է, որ «Պալլադա Ծաղկաձոր» բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը լուրջ շինարարական խնդիրների առաջ է կանգնած: ««Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ են հասել, որ դեռ նախորդ տարի՝ շինության հիմքը փորելիս, պարզվել է, որ շենքի նախատեսած հիմքում՝ մակերեսից 20 եւ ավելի մետր խորության վրա, գետ է հայտնաբերվել, որն էլ խաթարել է շինարարության ընթացքը: Բացի այդ՝ կան նաեւ սողանքներ»:

Կառուցապատող ընկերությունը չէր հերքել, այլ նույն հոդվածում մեկնաբանել էր, որ խնդիր եղել է, հարթվել է:

Նշենք, որ այժմ Էդգար Ավագյանը ոչ մի փաստաթղթով կապ չունի «Պալլադա Ծաղկաձոր» համալիրի հետ, ինչպես Ալեն Սիմոնյանի եղբայրը՝ «ԵվրոԱսֆալտ» ընկերության հետ: Նրա գործընկերները, թերեւս մամուլի ճնշումներից վախենալով, պահանջել են, որ փաստաթղթերով՝Էդգար Ավագյանը հեռանա «Պալլադա Ծաղկաձոր» ՍՊԸ-ից, բայց հայցերը շարունակում են քննվել ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի կնոջ ԱՄ իրավաբանական գրասենյակի պաշտպանությամբ՝ թերեւս մեծ զեղչերով: Տեղեկացնենք նաեւ, որ երկու հայցերն էլ ներկայացված են առանց «Ժողովուրդ»-ի խմբագրությանը հերքման պահանջ ուղարկելու: Այսինքն՝ այս հայցերի նպատակը ոչ թե արժանապատվության, պատվի վերականգնումն է, կամ հերքման պահանջը, այլ լրատվամիջոցին ֆինանսապես ճնշելը: Հավելենք, որ ««Պալլադա Ծաղկաձոր» ՍՊԸ-ն ընդդեմ «Ժողովուրդ» օրաթերթի» դատական նիստի օրն արդեն նշանակված է՝նոյեմբերի 28-ին՝ժամը 10:00-ին, Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում Ս. Բաբայանի նախագահությամբ:

Հիշեցնենք, որ Ալեն Սիմոնյանը քաղաքականություն մտնելու օրվանից՝2016 թվականից, հայց է ներկայացրել ընդդեմ մամուլի եւ հասարակական քաղաքական գործիչների, որոնք երբեւէ քննադատել են իրեն:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մարիա Կարապետյանը, ում տարիներ շարունակ խմբակցության մեծամասնությունը «սրերով» է ընդունել, իր անշարժ գույքի, շահերի եւ ծախսերի հայտարարագիրը ներկայացրել է 2024 թվականի մայիսի 28-ին, որտեղ հայտարարագրել է Արաբկիր վարչական շրջանում միանձնյա սեփականության իրավունքով եւ գնման եղանակով ձեռք բերված բնակարան. գնումը եղել է 2010 թվականին: Հաշվետու տարվա վերջում գույքը պահպանվել է: Պատգամավորը հաշվետու տարում տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Մարիա Կարապետյանի բանկային հաշիվների մնացորդները տարբեր են. դրանցից մեկը հաշվետու տարվա սկզբում զրոյական վիճակում է եղել, որը տարվա վերջում դարձել է 1 մլն 272 հազար դրամ, մյուսը տարեսկզբին կազմել է 42.25 դոլար, ինչը տարվա վերջում զրոյացվել է, մեկ այլ բանկային հաշվի մնացորդը տարվա սկզբում կազմել է 764 դրամ, իսկ տարվա վերջում դարձել է 80 հազար դրամ, հաջորդը տարվա սկզբում կազմել է 332 հազար դրամ, իսկ տարվա վերջում զրոյացվել է. 10 եվրոն նույնպես տարեվերջին զրոյացվել է, իսկ 44.55 լարին պահպանվել է նույն կերպով: Նրա կանխիկ գումարը տարվա սկզբում կազմել է 30 հազար դրամ, ինչը պահպանվել է տարվա վերջում: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մարիա Կարապետյանի հաշվետու տարվա եկամուտը կազմել է 10 մլն դրամ, որը նրա աշխատանքի վարձատրությունն է: Հիշեցնենք, որ 2021 թվականին մի խումբ քաղաքացիներ ակցիա էին իրականացրել Մարիա Կարապետյանի բնակավայրի տարածքում՝ տարբեր տեղերում փակցնելով նրա լուսանկարը՝ «Այս թաղամասում բնակվում է ԱԺ պատգամավոր, դավաճան Մարիա Կարապետյանը» մակագրությամբ:

Արցախի ՊԲ նախկին հրամանատար, «Միասնական հայրենիք» կուսակցության ղեկավար Սամվել Բաբայանն ակտիվորեն պատրաստվում է 2026 թվականի ԱԺ հերթական ընտրություններին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝նա վերջին շրջանում պարբերաբար հանդիպումներ է ունենում Արցախի եւ Հայաստանի տարբեր քաղաքական ուժերի հետ եւ առաջարկում է կոալիցիա կազմել՝2026 թվականի ընտրություններին մասնակցելու համար: Սամվել Բաբայանի «Միասնական հայրենիք» կուսակցության խմբակցության պատգամավոր Մարսել Պետրոսյանը մեզ հետ զրույցում նշեց, որ շարունակաբար զրույց է ունենում Սամվել Բաբայանի հետ, բայց թե վերջինս ինչ հանդիպումներ է ունենում եւ ինչ է քննարկում՝ տեղեկություն չունի: Ավելի վաղ հայտնել էինք նաեւ, որ Սամվել Բաբայանը Արցախի պատգամավորներին առաջարկել է ստեղծել հատուկ կոմիտե, ու ոչ բաց տեքստով ակնարկել է, որ իրեն է պատկերացնում այդ նորաստեղծ կոմիտեի նախագահի պաշտոնում: Սամվել Բաբայանն արցախցի պաշտոնյաներին ու քաղաքացիներին առաջարկել է համախմբվել իր շուրջ ու մեկ ճակատով հանդես գալ 2026-ին սպասվող հերթական կամ արտահերթ ընտրությունների ժամանակ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՔՊ-ական պատգամավորների եւ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի ներքին տարաձայնությունները խոր արմատներ ունեն, որոնք «հասնում» են ՔՊ-ական սպիտակահեր պատգամավորի մոտ: Բանն այն է, որ Գրիգոր Մինասյանի հրաժարականից առաջ ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը զանգահարել է Գրիգոր Մինասյանին եւ պահանջել, որ պետք է քրեակատարողական ծառայության պետ Ամբակում Գրիգորյանին ազատի պաշտոնից, քանի որ նա «նախկին» է: Ի պատասխան՝ Գրիգոր Մինասյանը պնդել է, որ նա լավ կադր է ու կշարունակի աշխատել, եւ եթե կա դժգոհություն գործունեության մասով, կարող է ասել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Գրիգոր Մինասյանի այս պատասխանից հետո Անդրանիկ Քոչարյանն ասել է՝ «եթե չհանես Ամբակումին, հալդ կտեսնես»: Արդյունքում, հոկտեմբերի 1-ին խարդավանքներին զոհ գնալով՝ Մինասյանը հրաժարական տվեց, երեկ առավոտյան էլ նույն հետքերով գնաց Ամբակում Գրիգորյանը: Իսկ Անդրանիկ Քոչարյանը ԱԺ-ում հաղթական ժպտում էր առավոտյան. հերթական պաշտոնյային գործից հանեց:

ԶՐՈՒՅՑ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՋՈՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒ ԿՈՉ

Երեկ Հանրապետության հրապարակում կայացավ Սրբազան շարժման մեծ հանրահավաքը, որին մասնակցում էին բազմաթիվ քաղաքական գործիչներ, նախկին պատգամավորներ, հասարակական գործիչներ եւ քաղաքացիներ:



Մինչ հանրահավաքի մեկնարկը «Ժողովուրդ» օրաթերթը շրջել է Հանրապետության հրապարակում եւ զրուցել հասարակական եւ քաղաքական գործիչների հետ: Հրապարակում էր նաեւ Երեւանի նախկին քաղաքապետ Ալբերտ Բազեյանը:

-Պարոն Բազեյան, մինչ ընդդիմադիր գործիչները մեղադրում են Փաշինյանին այն բանի համար, որ Արցախը, ապա Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքից մաս-մաս հողեր հանձնեց, Նիկոլ Փաշինյանը քիչ առաջ (խմբ.) Ազգային ժողովի ամբիոնից ասաց, որ մեր ինքնիշխան տարածքից ոչ մի միլիմետր չի հանձնվել: Այսինքն՝ ամբողջությամբ հակառակն է պնդում:

-Նիկոլ Փաշինյանը լկտիաբար ստում է: Փաշինյանն իր իշխանության օրոք մեր երկիրը տարավ Ալիեւի հետ պայմանավորված հանպատրաստից պատերազմին, որտեղ մենք պետք է կրեինք պարտություն, եւ Արցախը ինքը պետք է հանձներ թուրքին: Այդ պատերազմի ընթացքում մենք դաշնակիցներ չունեինք, որովհետեւ Նիկոլ Փաշինյանի դիվանագիտությունը չէր աշխատելու, իսկ Ադրբեջանը ուներ հզոր դաշնակիցներ՝ հանձինս Թուրքիայի, Իսրայելի, որոնք Ադրբեջանին ռազմական եւ տեխնիկական միջոցներ էին մատակարարում, թուրքական «Բայրաքթար» կոչվող ԱԹՍ-ներ, Սիրիայից բերված վարձկաններ: Ադրբեջանին օգնում էր նաեւ Պակիստանը, որն առ այսօր չի ճանաչել Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անկախ պետություն:

Մենք մենակ էինք այդ պատերազմի ընթացքում: Լինելով ՀԱՊԿ անդամ՝ ոչ մի օգնություն ՀԱՊԿ-ից չստացանք: Ընդ որում, այն դեպքում, երբ ադրբեջանցիները ոչ միայն գրավեցին ողջ Արցախը, այլ նաեւ Հայաստանի Հանրապետության մի քանի տասնյակ քառակուսի կիլոմետր տարածք եւ մի քանի կարեւորագույն ռազմավարական նշանակություն ունեցող դիրքեր: Նրանք շարունակում են անդադար պահանջներ ներկայացնել. պահանջում են մոռանալ Արցախը, նոր զիջումների գնալ, մոռանալ Ցեղասպանության հարցը, վախեցնում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին նոր պատերազմով, ինչը անում են նաեւ ՔՊ-ականները: Ցանկացած դեպքում իրենք էլ վախից անդադար հայտնաբերում են նոր խմբեր, որոնք իբր փորձում են զավթել կառավարությունը, ոչնչացնել Նիկոլին ու բռնազավթել իշխանությունը: Այդպիսի հոդված են «դրել» նաեւ ինձ վրա:

Ազգային անվտանգության ծառայությունը հավաքագրել է մարդկանց, որ իմ դեմ ցուցմունք տան՝ իբր ես եմ եղել այն հանցավոր խմբի ղեկավարը, որը նպատակ է ունեցել յոթ-ութ հոգով մտնել Կառավարության շենք, ֆիզիկապես ոչնչացնել Նիկոլին ու բռնազավթել իշխանությունը: Ես դատական նիստերի ընթացքում հայտարարել եմ, որ, եթե անգամ մենք ֆիզիկապես ոչնչացնենք Նիկոլին, ապա որեւէ մեկը չի կարող դառնալ վարչապետ: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը Ազգային ժողովում ունի բացարձակ մեծամասնություն: Հետեւաբար, իր թեկնածուին կընտրի վարչապետ, իսկ Նիկոլին կսրբացնի եւ կհայտարարի նահատակ: Մեր մոտեցումը հետեւյալն է. ամբողջ հանրապետությունով մեկ հանրությանը հանել ոտքի՝Նիկոլ Փաշինյանի եւ այսօրվա կառավարության հրաժարականի եւ գործող Ազգային ժողովի լուծարման պահանջով: Կարճ ժամանակի համար կազմվի ժամանակավոր Կառավարություն, որը կնախապատրաստի արդար, օրինական Ազգային ժողովի նոր ընտրություններ: Իսկ Նիկոլ Փաշինյանն ու իր գործընկերները պետք է ենթարկվեն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով դատական պատասխանատվության՝ մեր երկիրն ու մեր հաղթական ժողովրդին պարտության մատնելու, ինչպես նաեւ Արցախն ու ՀՀ մի քանի տասնյակ քառակուսի կիլոմետր թուրքին հանձնելու համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ
Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

«ԻՋՈՒՐ ՄՈՏԵՑԱՔ..., ԵՍ ՁԵԶ ՀԱՐՑ ՉԷԻ ՈՒՂՂԵԼ». ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱԺ-ում հարցուպատասխանի ժամանակ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աղվան Վարդանյանը մեջբերեց 2021 թվականի եւ 2024 թվականին Եռաբլուրում Նիկոլ Փաշինյանի արած երկու ելույթներից իրար հակասող հատվածներ:

Ելույթներից մեկում Փաշինյանը նշել է, որ մեր նահատակները՝ մեզ համար պետություն ունենալու նոր հնարավորություն են բացել, մյուսում, որ մեր տղաները զոհվել են այն բանի համար, որ երբ Ադրբեջանի նախագահը հայտարարի, որ Ղարաբաղի հարցը լուծված է, մենք կարողանանք ասել՝ Ղարաբաղի հարցը լուծված չէ, որովհետեւ Ադրբեջանի պլանը հենց դա էր, որ Ղարաբաղի հարցը լուծեր, որ ֆիզիկապես Ղարաբաղում ոչ մի հայ չմնար:

«2 մեջբերումն էլ նույն մարդուց է՝Նիկոլ Փաշինյանից: Ո՞ր խոսքին հավատա ՀՀ քաղաքացին: «Արցախը կա՛» ասելով՝ դու Արցախը հանձնել ես Ադրբեջանի նախագահին, հիմա պետություն ունենալու նոր հնարավորությո՞ւն ես տեսնում, թե՞ իշխանության մնալու հնարավորություն»,- ասաց Վարդանյանը:

Նա հավելեց, որ այդ մարդուն (Փաշինյանին-խմբ.) հարց չունի տալու, եւ որ հարց է տալիս ՀՀ քաղաքացիներին, զոհերի հարազատներին, թե հազարավոր մարդկանց կյանքի վրա այսպես մանիպուլյացիա անողին ի՞նչ անուն կտան, ինչպե՞ս կբնութագրեն:

Փաշինյանն այդուհանդերձ արձագանքեց Վարդանյանի հարցին՝ ասելով, որ երկու մեջբերումն էլ ճիշտ են, եւ որ Վարդանյանի կողմից երկու մեջբերումների միջեւ ընկած թվացյալ հակադրությունները ամբողջությամբ մեկնաբանված են: Նա կոչ արեց քաղաքացիներին բացել եւ լսել նախորդ ԱԺ-կառավարություն հարցուպատասխանը, եւ ամեն բան պարզ կլինի:

Աղվան Վարդանյանն էլ արձագանքեց. «Իզուր մոտեցաք ամբիոնին, ես Ձեզ հարց չէի ուղղել, եթե Ձեզ հարց չեն տալիս, մի՛ պատասխանեք»:

Փաշինյանն էլ ասաց. «Եթե հարց չունեք՝ մի արձագանքեք, ինչո՞ւ եք արձագանքում: Արձագանքում եք՝ուրեմն հարց ունեք: Ի՞նչ, կոմպլեքսավորվո՞ւմ եք ինձ հարց տալուց, թե՞ մտածում եք՝ ինչ-որ բան ասեք, այնպես անեք, որ ես ամբիոնին չմոտենամ, որ հետո ասեք՝տեսաք՝ինչ հարց տվեցի, չկարողացավ պատասխանել: Դուք ՀՀ քաղաքացիներին եք դիմում, ես այստեղ մոտեցել եմ որպես ՀՀ քաղաքացիների ներկայացուցիչ», - ասաց Փաշինյանը:

«ԳՅՈՒՂԵՐԸ ՊԵՏՔ Է ԿՈՅՈՒՂԻ ՈՒՆԵՆԱՆ, ԲԱՅՑ ՉՈՒՆԵՆ». ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թվականի հոկտեմբերի 12-ին Նիկոլ Փաշինյանը, ելույթ ունենալով «Իմ քայլը հանուն Արագածոտնի մարզի» ներդրումային բիզնես ծրագրերի համաժողովին, խոստացավ, որ գյուղերը պետք է ունենան կոյուղի, գյուղական տներում պետք է լինեն բաղնիք, ցնցուղ, տաք ջուր եւ գյուղի տների դրսի զուգարանի կուլտուրան պետք է դուրս գա մեր մշակույթից:

Սակայն իրականում գյուղական տներում նույն վիճակն է, ինչը կար այս խոստումից առաջ:

Կոյուղի անցկացնելու համար մարդիկ փորում են հողը եւ կոյուղաջրերը լցնում հողի տակ: Կենցաղային կյանքի բարելավման մասով, պետությունը բացարձակ ոչինչ չի արել, հետեւաբար փոփոխություն տեղի չի ունեցել: Ավելին՝գյուղատնտեսության ոլորտում միայն անկումներ են: Նիկոլ Փաշինյանը, սակայն, բազմիցս հայտարարել է, որ քանի գյուղացիները մտածողությունը չեն փոխել, աղքատությունն իրենց գլխից չեն հանել, չեն զարգանա:

Ո՞Վ ԿՓՈԽԱՐԻՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

Երեկ ՔՊ-ն վարչության նիստին արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին փոխարինող թեկնածուների անուններ է քննարկել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ տարբեր անուններ են շրջանառվել՝ այդ թվում պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանի եւ Արփի Դավոյանի անունները, վերջինս նաեւ Գրիգոր Մինասյանի պաշտոնանկության նախաձեռնողն է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ վարչության անդամների մեծ մասը հենց կողմ է արտահայտվել Արփի Դավոյանի թեկնածությանը:

Հավելենք, որ վերջնական որոշում դեռ ՔՊ-ն չունի, հաջորդ շաբաթ կայանալիք վարչության նիստին արդեն վարչությունը նոր նախարար կառաջադրի:

ԱԼԻԵՎԻ ՆՈՐ «ՊԱՀԱՆՋՆԵՐԸ»

Եթե Հայաստանը ցանկանում է խաղաղության հասնել Ադրբեջանի հետ, «պետք է» դատապարտի «ադրբեջանցիների դեմ իրականացված վայրագությունները» եւ «պատժի մեղավորներին»: Այս մասին հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

«Այժմ Ադրբեջանում պատասխանատվության են ենթարկվում «ռազմական հանցագործությունների որոշ մեղավորներ», սակայն Հայաստանում ոչ մի «հանցագործ» պատասխանատվության չի ենթարկվել, այլ ընդհակառակը, հերոսացվել է: Հայաստանին կոչ ենք անում հրաժարվել իր ապակառուցողական դիրքերից եւ կատարել միջազգային մարդասիրական իրավունքով ստանձնած պարտավորությունները»,- ասել է Ալիեւը:

ԱԺ–Ն ՇՈՒՐՋ 3 ՄԼՆ–Ի ԳԻՆԻ ԵՎ ԿՈՆՅԱԿ Է ԳՆԵԼ

ՀՀ Ազգային ժողովը վերջին մեկ ամսում մեկ անձից գնման եղանակով գրեթե 3 մլն դրամ արժողությամբ պայմանագրերով ձեռք է բերել գինիներ եւ կոնյակներ:

Նույն օրը 2 պայմանագիր է կնքվել «ԱՐՏԷՔՍԻՄ» ՍՊ եւ «Վինո-Վինո» ՍՊ ընկերությունների հետ:

«ԱՐՏԷՔՍԻՄ» ՍՊԸ-ի հետ կնքած պայմանագիրն արժեցել է 793 հազար 200 դրամ, իսկ «Վինո-Վինո» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը՝ 2 մլն 235 հազար դրամ:

«ԱՐՏԷՔՍԻՄ» ՍՊԸ-ից ՀՀ Ազգային ժողովի 2024թ. կարիքների համար պատվիրակությունների ընդունման եւ արտասահմանյան այցելությունների կազմակերպման համար ձեռք են բերվել գինիների, իսկ «Վինո-Վինո» ՍՊԸ-ից, նույն կարիքների համար, ձեռք են բերվել կոնյակներ:

«Վինո-Վինո» ՍՊԸ-ից ձեռք է բերվել 250 կոնյակ՝ «Ախթամար», «Էյփրիքոթ», «Չերի» եւ «Արարատ Շառլ» բրենդների:

«Արարատ Շառլ»-ն ամենաթակ կոնյակն է, որի մեկ հատն արժե 52 հազար 500 դրամ:

«ԱՐՏԷՔՍԻՄ» ՍՊԸ-ից ԱԺ-ն գնել է 84 գինի՝ «Թարիրի» տարբեր տեսակներ, «Տակառ», «Կուր», «Տուս», «Տուշպա» եւ եւս 2 այլ տեսակի գինի: Գինիներից ամենաթանկը 28 հազար դրամ արժողությամբ «Թարիրի» փրփրուն ավանդական գինին է:

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՀԶՔԲՈԼԼԱՀ»-Ը ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է...

Լիբանանի շիա «Հզբոլլահ» շարժումը հայտարարել է Իսրայելի բանակի զինծառայողների հետ մարտական բախումների մասին Լիբանանի հարավի սահմանամերձ էլ Ադիսա բնակավայրում: Այդ մասին հաղորդում է ՏԱՍՍ-ը:

«Իսլամական դիմադրության մարտիկները չորեքշաբթի՝ հոկտեմբերի 2-ի լուսադեմին, բախվել են իսրայելական հակառակորդի հետեւակի ջոկատին, որը փորձել է ներթափանցել էլ Ադիսա քաղաք Հալեթ էլ Մահաֆերի կողմից», - ասվում է շիաների շարժման հայտարարության մեջ:

«Հզբոլլահ»-ը պնդում է, որ Իսրայելի բանակի ստորաբաժանումը ստիպված է եղել նահանջել կրած կորուստների պատճառով:

Իսրայելը սեպտեմբերի 23-ից ավիահարվածներ է հասցնում Լիբանանին, իսկ հոկտեմբերի 1-ին հայտարարել է այնտեղ ցամաքային գործողություն սկսելու մասին: Ըստ Լիբանանի կառավարության՝ իսրայելական հարվածներից վերջին մեկ տարվա ընթացքում Լիբանանում գրեթե 1900 մարդ է զոհվել, ավելի քան 9000-ը՝ վիրավորվել, նրանց մեծ մասը՝ վերջին երկու շաբաթվա ընթացքում:

«ՀԵԼԵՆ» ՓՈԹՈՐԿԻ ԶՈՀԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՍԵԼ Է 166-Ի

ԱՄՆ-ի հարավ-արեւելյան վեց նահանգներում մոլեգնող «Հելեն» փոթորիկն արդեն 166 մարդու կյանք է խլել եւ իր հետեւից մեծ ավերածություններ թողել: Այս մասին հաղորդում է The Associated Press գործակալությունը:

Փոթորկի հետ կապված մահվան դեպքեր են գրանցվել Հյուսիսային Կարոլինայում, Հարավային Կարոլինայում, Ջորջիայում, Ֆլորիդայում, Թենեսիում եւ Վիրջինիայում:

Ըստ գործակալության՝ Հյուսիսային Կարոլինայում մինչեւ ծնկները հասնող ցեխի մեջ արտակարգ ծառայությունները որոնողական շների հետ միասին փնտրում են փոթորկի ավելի շատ զոհերի: Նշվում է, որ զոհերի թիվը կարող է աճել:

«Հելեն» փոթորիկն ամենամահաբերներից մեկն է ԱՄՆ-ի պատմության մեջ: Մեկ միլիոնից ավելի մարդ զրկվել է էլեկտրամատակարարումից: Մի քանի քաղաքներում խափանվել է բջջային կապը:

Ըստ մասնագետների՝ մեծ է հավանականությունը, որ փոթորիկները կդառնան ավելի ու ավելի ինտենսիվ:

ՔԱՆԻ ԼԻԲԱՆԱՆՑԻ Է ՓԱԽԵԼ ՍԻՐԻԱ

Իսրայելի գործողության հետեւանքով ավելի քան 100 հազար լիբանանցի փախել է Սիրիա, երկրի հարավում 200 հազար մարդ լքել է իր տունը: Այս մասին ճեպազրույցում հայտարարել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնական ներկայացուցիչ Ստեֆան Դյուժարիկը:

Դյուժարիկը հավելել է, որ իրավիճակի սրման պատճառով Իսրայելի հյուսիսում իր տունը լքել է ավելի քան 60 000 մարդ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԳԱՂՏՆԻ ՈՉԻՆՉ ՉԿԱ». ՓԱՇԻՆՅԱՆ

«Ի՞նչ իրավական հիմքով են հանձնվել Շուռնուխի, Կիրանցի հատվածներում Հայաստանի իրավազորության տակ գտնվող տարածքները: Եթե չկա այդպիսի իրավական հիմք, հիմա նոր այս կանոնակարգով է ստեղծվում այդ հիմքը, ապա Ձեր գործողությունն ինչպե՞ս կբնութագրեք՝ հանցագործությո՞ւն, ապաշնորհությո՞ւն»: Այս մասին երեկ՝ ԱԺ-ում հարցուպատասխանի ժամանակ, դիմելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ասաց «Հայաստան» խմբակցության ֆրակցիայի ղեկավար Արծվիկ Մինասյանը:

«Երկրորդ, եթե նոր է ստեղծվում իրավական հիմքը, հնարավո՞ր է, որ նոր տարածքներ հանձնվեն թշնամուն: Հիշեցնեմ, որ միայն ձեր ժամանակահատվածում է, որ խոսում ենք Հայաստանի ինքնիշխան իրավազորության տակ գտնվող տարածքների հանձնման մասին», - ասաց նա:

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն արձագանքեց. «Նախ, եկեք արձանագրենք, որ ՀՀ ինքնիշխան տարածքից որեւէ մեկը երբեւէ տարածք չի հանձնել, եթե չանդրադառնանք 1920 թվականին, երբ ՀՅԴ-ն ամբողջ Հայաստանի Հանրապետությունը հանձնեց: Ձեր ստեղծած իրականության մեջ մի՛ ապրեք»:

Ապա նա ամբիոնի մոտ հրավիրեց վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Վերջինս նշեց. «Ես իմ անձնական որոշման հնարավորությունը տվել եմ, որ դուք ծանոթանաք այդ թղթերին (նկատի ունի խաղաղության պայմանագրի նախագիծը խմբ.): Դուք այդ թղթերին ծանոթացել եք, հետո սոցիալական ցանցերում ինչ-որ գրառումներ եք արել՝ իրականության հետ կապ չունեցող, ձեր քաղաքական նպատակներով շահարկել եք, ես էլ արգելել եմ: Լավ եմ արել, որովհետեւ, դուք գնաք տեքստը կարդաք, հետո գաք, դրա մասին հեքիաթնե՞ր պատմեք, մենք էլ այսպես սուսուփուս նստե՞նք: Ո՞րն է այդտեղ տրամաբանությունը:

Ես այդ հնարավորությունը տվել եմ, որ դուք, որպես պատգամավորներ, ծանոթ լինեք պրոցեսին: Ավելին ասեմ՝ երեւի ՔՊ-ից շատ պատգամավորներ ծանոթ չեն այդ տեքստին, չեն կարդացել, չնայած՝ ես իրենց հետ հանդիպումներին ամբողջ տեղեկատվությունը ներկայացնում եմ: Հիմա դատի եք տվել, լավ եք արել, դատարանը թող որոշի: Մենք էլ մեր դիրքավորումը կունենանք դրան»:

Փաշինյանը վստահեցնում է՝ խաղաղության պայմանագրի բովանդակությունը, որն առաջարկել են, հանրության համար բացահայտված է:

«Այդ կետերին ես անդրադարձել եմ տարբեր առիթներով, գաղտնիքի խնդիր չկա, զուտ դիվանագիտական կոռեկտության հարց կա», - ԱԺ-ում այս մասին հայտարարեց նա՝ արձագանքելով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանի դիտարկմանը, որ Խաղաղության պայմանագրի կետերը գաղտնի են պահվում:

Փաշինյանն ասաց, թե չի կարող պահել թուղթն ու ասել՝ առաջին կետում ինչ է գրված, 2-րդում՝ ինչ, ու այդպես շարունակ: Ըստ նրա՝ դա ճիշտ չի լինի 2-րդ կողմի համար:

«Խաղաղության պայմանագրի նախագծի մեջ միջազգային դիվանագիտական պրակտիկայից անհայտ որեւէ բան չկա»,- նշեց նա:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ՆԱԽԿԻՆՆԵՐԻՆ» ԷԼ ՉԻ՞ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ

«Նախկիններին» օրուգիշեր քննադատող ՔՊ-ական Անդրանիկ Քոչարյանը, ով «կատաղի» պայքար է մղում նախկին իշխանությունների եւ բարքերի դեմ, հիմա ամեն հարմար առիթի դեպքում սիրով ողջագուրվում եւ համբուրվում է իր «սիրելի» «նախկինների» հետ:

Այսպիսով, նախորդ շաբաթ՝ սեպտեմբերի 28-ին եւ 29-ին, իշխանական վերնախավը՝ նախարարներ, պատգամավորներ եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաներ մասնակցեցին Մայր Տաճարի վերաօծման եւ Մյուռոնօրհնեքի արարողություններին:

Այնտեղ էր նաեւ ՔՊ-ական «ամենանախկին» պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը, ով իր նշած «նախկինների» օրոք բարձր պաշտոններ է զբաղեցրել, բայց հիմա տիպիկ ՔՊ-ականի դեմքով օրուգիշեր քննադատում է նախկին նախագահներին եւ մյուս պաշտոնյաներին ու մեղադրում նրանց անգամ իրենց իշխանության ձախողումների մեջ, որոնք, ի դեպ, բազմաթիվ են եւ ծանր հետեւանքներ են ունենում մեզ համար:

Անդրանիկ Քոչարյանն այնքան է տարված «նախկինների» դեմ պայքարի մոլուցքով, որ անգամ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի պաշտոնանկությունը նախաձեռնեց, այն բանի համար, որ նա Վատիկանում ՀՀ նախկին դեսպան Միքայել Մինասյանի եղբայրն է:

ԻՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Նիկոլ Փաշինյանն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի առաջին տեղակալ Մոհամմադ Ռեզա Արեֆին:

Վարչապետը շնորհավորել է պարոն Արեֆին պատասխանատու պաշտոնում նշանակվելու առիթով՝ մաղթելով ամենայն բարիք հետագա գործունեության ընթացքում: Նիկոլ Փաշինյանը նշել է, որ Իրանի հետ Հայաստանի հարաբերությունների շարունակական զարգացումը ՀՀ կառավարության առաջնահերթություններից է: Վարչապետը բարձր է գնահատել Իրանի սկզբունքային եւ հրապարակային դիրքորոշումը ՀՀ տարածքային ամբողջականության եւ միջազգայնորեն ճանաչված պետական սահմանների անքակտելիության վերաբերյալ:

Մոհամմադ Ռեազ Արեֆին շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար եւ շնորհավորել ՀՀ անկախության տարեդարձի առիթով: ԻԻՀ նախագահի առաջին տեղակալը վերահաստատելով Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդ Սեյեդ Ալի Խամենեիի խոսքերը՝ եւս մեկ անգամ ընդգծել է, որ Իրանը լիովին պաշտպանում է Հայաստանի տարածքային ամբողջականությունը եւ անընդունելի համարում տարածաշրջանում ցանկացած սահմանային փոփոխություն: Միաժամանակ, նա ընդգծել է Հայաստանի հետ բազմաոլորտ համագործակցության Իրանի նպատակադրումն ու պատրաստակամությունը:

Վարչապետ Փաշինյանն անդրադարձել է Հայաստան-Ադրբեջանի խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումների շուրջ վերջին զարգացումներին, տարածաշրջանային հաղորդուղիների ապաշրջափակմանն ուղղված ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագծին ու դրա սկզբունքներին՝ շեշտելով, որ Հայաստանը պատրաստ է ինքնիշխանության, իրավազորության, հավասարության եւ փոխադարձության սկզբունքների հիման վրա ապաշրջափակմամբ նպաստել շահագրգիռ պետությունների առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը:

Իր հերթին ԻԻՀ նախագահի առաջին տեղակալն ընդգծել է, որ իր երկիրն աջակցում է ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագծին:

Զրուցակիցները քննարկել են երկկողմ առեւտրատնտեսական հարաբերություններին եւ դրանց զարգացմանը, էներգետիկայի, ենթակառուցվածքների, ճանապարհաշինության, զբոսաշրջության եւ այլ ուղղություններով համագործակցությանը վերաբերող հարցեր:

Մտքեր են փոխանակվել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի շուրջ:

ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԴԵՊՔ

ՈՐՈՇՈՒՄ՝ ՆԱԽԿԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ՈՐԴՈՒ ԳՈՐԾՈՎ

Քննչական կոմիտեն որոշում է կայացրել ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղեկալի որդու՝ թմրանյութի գործով:



Հիշեցնենք, որ Shamshyan.com-ը գրել էր, որ օգոստոսի 22-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 16:55-ի սահմաններում Երեւանի բնակիչ 38-ամյա Գեորգի Ապրիամովն իր վարած Hyundai Sonata մակնիշի ավտոմեքենայով Շոպրոնի փողոցում՝ թիվ 77 հասցեի մոտ, բախվել է կայանված Opel մակնիշի ավտոմեքենային: Նրա կողմից վարած ավտոմեքենայում հայտնաբերվել են կաթոցիչներ, թմրանյութի նմանվող զանգվածներ եւ այլ կասկածելի իրեր:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմել է կոմիտեին՝ հասկանալու, թե ինչ փուլում է գտնվում գործը: Ի պատասխան՝ հայտնեցին. «2024 թ. օգոստոսի 22-ին Նոր Նորք վարչական շրջանում ծառայություն իրականացնելու ընթացքում պարեկային ծառայության աշխատակիցները Երեւան քաղաքի Շոպրոն փողոցի 77 հասցեի մոտ նկատել են, որ «Հյունդայի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը դրսեւորել է ոչ ադեկվատ վարքագիծ: Վերջինս հայտնել է, որ օգտագործել է թմրամիջոց, ինչպես նաեւ նշել է, որ իր ավտոմեքենայում գտնվում է իր կողմից օգտագործված թմրամիջոցի կաթոցիչը, թմրամիջոցի մի մասը, ինչպես նաեւ ավտոմեքենայի նստատեղերի պահոցում առկա է թվով 6 սրվակ «մեթադոնային լուծույթ», որը պատկանում է իրեն: Նույն օրը նշված անձը տեղափոխվել է ոստիկանության Նոր Նորքի բաժին, որտեղ պարզվել է նրա ինքնությունը:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասի եւ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Նախաքննությամբ ձեռք են բերվել փաստական տվյալներ առ այն, որ նշված անձը՝ Գ.Ա.-ն, իր անձնական օգտագործման համար ապօրինի ձեռք է բերել եւ իր կողմից շահագործվող ավտոմեքենայում ապօրինի պահել «MDMB(N)-2201 տեսակի թմրամիջոց կրող բուսական զանգված» տեսակի, ընդհանուր խոշոր չափի՝ 0.43 գրամ քաշով թմրամիջոց, ինչը հայտնաբերվել եւ վերցվել է վարույթն իրականացնող մարմնի կողմից նշված ավտոմեքենայում կատարված խուզարկության արդյունքում:

Փաստերի հիման վրա նշված անձի՝ Գ.Ա.-ի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է հանրային քրեական հետապնդում եւ նրան ներկայացվել է մեղադրանք: Նրա նկատմամբ կիրառվել են բացակայելու արգելք եւ 3.000.000 ՀՀ դրամի չափով գրավ խափանման միջոցները: 2024 թ. սեպտեմբերի 25-ին քրեական վարույթի նյութերն ուղարկվել են հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու, հարցը լուծելու նպատակով»:

Գ. Ապրիամովի հայրը՝ Էնրիկո Ապրիամովը, կոչումով գեներալ-լեյտենանտ է եւ բարձր պաշտոններ է զբաղեցրել ՀՀ պաշտպանության նախարարությունում, այդ թվում՝ եղել է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԳԱԳԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԴԵՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ «Արմ Կոնսուլը» պահանջում է քրեական գործ հարուցել եւ պատասխանատվության ենթարկել ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն (Գագիկ) Մելքոնյանին

Սույն թվականի սեպտեմբերի 10-ին ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն Մելքոնյանը հարցազրույցի ընթացքում հնչեցրել է արտահայտություններ՝ ընդդեմ արցախցիների, որոնք առերեւույթ պարունակել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված արարքի հատկանիշներ, այն է՝ անձանց նկատմամբ էթնիկական ծագումով եւ քաղաքական հանգամանքներով պայմանավորված ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք, որոնք կատարվել են զանգվածային լրատվության միջոցի օգտագործմամբ:

Մասնավորապես, հարցազրույցի ընթացքում Գուրգեն Մելքոնյանը հնչեցրել է հետեւյալ արտահայտությունները (մեջբերվում է բառացի)՝ «Իրենց (արցախցիների) շենքը (Արցախի Հանրապետության ներկայացուցչության շենք) էնտեղ ա, իրանք թող ապրեն իրանց համար, թող աշխատեն, բայց մեր երկրի գործերին չխառնվեն: Էս ա խնդիրը (...) », « (...) Արցախը իրանց (արցախցիների) երկիրն էր: Արցախը հանձնեցին, եկան էստեղ: Հիմա թող իրանց հյուրի նման պահեն, ոչ թե ուզենան տանտեր դառնան: Առանց էդ էլ քսան տարի տանտեր են եղել, դրա համար էս երկիրը էս վիճակին ա (...)» եւ այլն:

Այս դեպքով պայմանավորված՝ «Արմ Կոնսուլ» փաստաբանական գրասենյակը ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն Մելքոնյանի դեմ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված առերեւույթ հանցագործության հատկանիշների առկայության հիմքով:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՔԿ–Ն ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է ՏԱՐԱԾԵԼ

ՀՀ քննչական կոմիտեն պարզաբանում է տարածել զրահաբաճկոնների ձեռքբերման վերաբերյալ՝ ներկայացնելով նաեւ դրանց անհրաժեշտության մասին տեղեկատվություն:

«Առանձին լրատվամիջոցներ, առանց հարկ համարելու իրավասու մարմնից՝ ՀՀ քննչական կոմիտեից անհրաժեշտ ճշտումներ կատարելու, ՀՀ քննչական կոմիտեի կողմից գնումներով մեկ խմբաքանակ՝ 100 հատ զրահաբաճկոնի ձեռքբերման առթիվ որոշել են մեկ բաժակ ջրում փոթորիկ ստեղծել՝ անելով որքան ֆանտաստիկ, նույնքան էլ ժպիտ առաջացնող, իրականությունից կտրված ենթադրություններ:

Հարկ ենք համարում պարզաբանել, որ զրահաբաճկոնների գնումը կատարվել է Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության անձնակազմի աշխատանքային կարիքներից ելնելով եւ պայմանավորված է նրանց գործունեության առանձնահատկություններով:

Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ծառայողները շատ հաճախ ստիպված են լինում քննչական գործողություններ իրականացնել առաջնագծում գտնվող մարտական դիրքերում, ինչի պայմաններում անհրաժեշտություն է քննիչին ապահովել անհրաժեշտ պաշտպանական միջոցներով:

Ի դեպ, նույն կարիքներից ելնելով, գնումներով ոչ միայն զրահաբաճկոններ են ձեռք բերվել, այլ նաեւ սաղավարտներ», - ասված է ՔԿ հաղորդագրության մեջ:

13–ԱՄՅԱ ԴՊՐՈՑԱԿԱՆԻՑ ՓՈՐՁԵԼ ԵՆ ԳՈՒՄԱՐ ՇՈՐԹԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ սեպտեմբերի 19-ին Ա. Հովհաննիսյանը ՀՀ պետական վերահսկողություն դիմում է ներկայացրել, որ 2023-2024 թթ.-ի ուստարվա ընթացքում թիվ 84 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտներն իր որդուց՝ 13-ամյա Ա.Ա.-ից, պարբերաբար գումար են փորձել շորթել, եւ չստանալով՝ ծեծի են ենթարկել նրան:

Նշել է նաեւ, որ ավելի ուշ կոնկրետ անձինք Երեւանի սրճարաններից մեկում իր ամուսնու՝ Գոռ Առուստամյանի հետ նախապես պայմանավորվածություն են ձեռք բերել եւ հանդիպել նշված սրճարանում: Վերջիններս զինված են եղել մահակներով ու գազային ատրճանակներով, սակայն նրանց կողմից հարված ստանալով՝ ամուսինը նույնպես դիմել է ուժի, ու զինված անձինք դիմել են փախուստի:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 1-ից 2-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 100 դեպք՝ որից 3-ը նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԵՆԸ ՔՈՒԼԵՋԻՆ «ԴԱՏԻ Է ՏՎԵԼ»

Դիլիջանի պետական քոլեջի նախկին տնօրեն Գրետա Թամրազյանը 2024 թ. ապրիլի 5-ին հայցադիմում է ներկայացրել դատարան՝ ընդդեմ «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի՝աշխատավարձի բռնագանձման պահանջի մասով, խնդրելով պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել 2015 թ. սեպտեմբերի 1-ից մինչեւ 2017 թ. փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածի համար «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար նախատեսված եւ հայցվորին չվճարված աշխատավարձը, ինչպես նաեւ այդ աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը: Սեպտեմբերի 18-ին Դիլիջանում կայացած դատական նիստում դատարանը գործի քննությունը շարունակել է պատշաճ կարգով ծանուցված պատասխանող կողմի բացակայությամբ եւ որոշել է նախնական դատական նիստն ավարտել եւ գործը նշանակել դատաքննության: Այս գործով դատական նիստ է նշանակվել հոկտեմբերի 17-ին: Գ. Թամրազյանը նախկինում քրեական հետապնդման է ենթարկվել: Գրետա Թամրազյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2006 թ.-ից աշխատելով ՀՀ կրթության եւ գիտության նախարարության «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն, հանդիսանալով պաշտոնատար անձ, ղեկավարելով քոլեջի կրթական, գիտական, արտադրական, ֆինանսական գործունեությունը, 2014թ.-ին ստացել եւ յուրացրել է քոլեջի բազմաթիվ ուսանողների կրթաթոշակների գումարները: 2020թ. օգոստոսի 7-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը վճռել է ճանաչել եւ հռչակել Գրետա Թամրազյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (երկու դրվագով), ՀՀ քրեական օրենսգրքի 38-325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ եւ նրան արդարացնել: Դատախազությունը այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել: 2021թ. մայիսի 12-ին քրեական գործերով վերաքննիչ դատարանը որոշել է մեղադրող էդ. Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակիորեն, ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2020թ. օգոստոսի 7-ի թիվ դատավճիռը բեկանել, Գրետա Թամրազյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված երկու, 38-325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեկ հանցագործությունները կատարելու համար, եւ նրան քրեական պատասխանատվությունից ազատել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: 2021թ. հոկտեմբերի 28-ին վճռաբեկ դատարանը որոշել է Գրետա Թամրազյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մայիսի 12-ի որոշման դեմ պաշտպան Ի. Պետրոսյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՋԱԿԻՑ՝ «ԹԻՄ ՏԵԼԵԿՈՄ»

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԸ»

Team Telecom Armenia-ի աջակցությամբ երկու օր առաջ մեկնարկեց համազգային «Գիտության շաբաթ»-ը, որը Հայաստանում անցկացվում է առաջին անգամ:

«Գիտության շաբաթը» հասարակության տարբեր շերտերի համար նախատեսված բազմաձեւաչափ միջոցառումների շարք է, որի նպատակն է հանրահռչակել գիտությունն ու տեխնոլոգիաները, բացատրել դրանց կարեւոր դերը ժամանակակից աշխարհում եւ գիտությունը դարձնել գրավիչ երիտասարդների համար:

Գիտության շաբաթվա շրջանակում հոկտեմբերի 1-ից 6-ը՝ ժամը 15:00-ից 21:00-ը, Ազատության հրապարակում կանցկացվի գիտության փառատոն, որը համախմբելու է գիտական ինստիտուտների, համալսարանների, կրթական եւ տեխնոլոգիական համայնքների ներկայացուցիչներին եւ, իհարկե, երիտասարդներին եւ երեխաներին:

Հոկտեմբերի 1-2-ին (խմբ.)՝ փառատոնի այցելուները հնարավորություն կունենան գիտափորձերի, գիտնականների հետ հանդիպումների, ցուցադրությունների ու քննարկումների միջոցով բացահայտելու գիտության տարբեր ոլորտները՝ տիեզերագիտությունից եւ մարդաբանությունից մինչեւ մոլեկուլային կենսաբանություն:

Հոկտեմբերի 3-4՝ «Ապագա գիտնականները» խորագրի ներքո երեխաների ու երիտասարդների համար կանցկացվեն մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ: Մասնակիցները կիմանան, թե ինչու դառնալ ֆիզիկոս, քիմիկոս, կենսաբան, մաթեմատիկոս կամ մարդաբան: Երիտասարդները կհանդիպեն գիտնականների հետ, որոնք կպատմեն իրենց ոլորտների առանձնահատկությունների մասին եւ կօգնեն կողմնորոշվել ապագա մասնագիտական ընտրության հարցում:

Հոկտեմբերի 5-6-ը նվիրված կլիմի գիտական ֆանտաստիկային, որը միշտ եղել է ոգեշնչման աղբյուր գիտնականների ու երիտասարդների համար՝ թույլ տալով երեւակայականը դարձնել իրականություն: Այս օրերին փառատոնը նվիրված կլիմի գիտական ֆանտաստիկայի աշխարհի ուսումնասիրությանը՝ գրականությունից մինչեւ կինո, կոմիքսներից մինչեւ գեղանկարչություն:

Գիտության շաբաթվա շրջանակում կազմակերպվել են նաեւ «ԳիտաCon» կոմիքսների, «Աստղային հորիզոն» գիտաֆանտաստիկ պատմվածքների եւ «Գիտության շաբաթը՝ իմ աչքերով» նկարչական մրցույթները, որոնց հաղթողներին Team Telecom Armenia-ն կպարգեւատրի հատուկ մրցանակներով:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՐՁՐ ՃՆՇՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ՎՐԱ ԷԼԻՏԱՐ ՇԵՆՔ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Դեռեւս 2024 թվականի մայիսի 4-ին արտակարգ իրավիճակ էր ստեղծվել Երեւանում. բարձր ճնշման ջրատարի վրա էլիտար շենք էին կառուցում: Ժամը 00:10-ի սահմաններում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության «911» ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնից ահազանգ էր ստացվել, որ Նոր Արեշ 50-րդ փողոցի թիվ 49 շենքի մոտակայքում, ջրանցքի ջրի մակարդակի բարձրացման հետեւանքով, ջրանցքի հենապատը փլուզվել էր, ինչից ջրալցվել էին հարակից տները:

Երեւանում արտակարգ իրավիճակ էր ստեղծվել կապված Նոր Արեշ թաղամասում ջրանցքի հենապատի փլուզման հետ, ինչից ջրալցվել էին հարակից բազմաթիվ տներ ու շինություններ, եւ ջուրը ողողել էր Էրեբունի վարչական շրջանի մի քանի կմ ճանապարհ: Ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը հայտնում է, որ շինարարության մոտ տեղադրված է եղել ցուցանակ, որով տեղեկանում ենք՝

«Շին. թույլտվություն՝ N01/18-Դ-144941-2487

Տրված՝28.11.2023

Կառուցապատող՝ Արտավազդ Միքաելյան

Կապալառու՝ «Արշիքոն» ՍՊԸ-Լիցենզիա: 16260

Հեղինակային հսկողությունը «Արշիքոն» ՍՊԸ-Լիցենզիա: 16261

Տեխնիկական հսկողություն Մկրտիչ Հարությունյան-Լիցենզիա: 13461

Շին. աշխատանքների սկիզբ՝29.08.2024

Շին. աշխատանքների ժամկետ՝ 36 ամիս»:

ՓԼՈՒԶՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին՝ ժամը 20:24-ին Արմավիրի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Ֆերիկ գյուղի Զահանգիր Աղա փողոցի տներից մեկի մոտակա անասնագոմի տանիքը փլուզվել է:

Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ փլուզվել է անասնագոմի տանիքը (մոտ 25 քմ):

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը տեղի ուժերով փլատակներից դուրս է բերվել 3 գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

Փրկարարներն իրականացրել են քանդման աշխատանքներ եւ փլատակներից դուրս բերել 2 գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

Աշխատանքներին ներգրավվել է մեկ տրակտոր:

ԽՈՇՈՐ ԱՎՏՈՎԹԱՐ

Հոկտեմբերի 2-ին՝ ժամը 08:22-ին, ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Երեւան քաղաքի Արին Բերդի փողոցում բախվել են մարդատար ավտոմեքենան եւ թիվ 51 երթուղին սպասարկող ավտոբուսը:

Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ Բագրատունյաց 81/1 հասցեի մոտակայքում բախվել են Zhongtong մակնիշի ավտոբուսը եւ Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենան, վերջինից տեղի է ունեցել վառելիքի արտահոսք: Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը՝ մեկ տուժած տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Փրկարարները իրականացրել են ավտոճանապարհի լվացման աշխատանքներ եւ սահմանազատել են տարածքը:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 20 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Ժողովուրդ» օրաթերթի՝ 23.01.2021թ. թիվ 10 (2273) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման», տեղեկացնում ենք, որ «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում (ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31) «ԲԻԷՍԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ -ին («Հայբիզնեսբանկ» ՓԲԸ) սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, համայնք Բազմաղբյուր, 6 փողոց, 1 փակուղի, 2 հասցեում գտնվող 233.5 ք.մ. բնակելի տան եւ 0.166 հա հողամասի աճուրդի փուլերը շարունակվելու են 07.10.2024թ.-ին՝ ժամը 12:00-ին հոլանդական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Լոտի մեկնարկային գինը՝8500000 ՀՀ դրամ: Աճուրդի ավարտը՝30.12.2024թ.:

«Հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 532.5 ՄԼՆ ԳՈՐԾԱՐՔ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ հարկ վճարողների կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի (այդ թվում՝ ՀԴՄ կտրոնների) տվյալներով 2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել է 532.5 մլն գործարք՝ 9 տրլն 782.7 մլրդ ՀՀ դրամ արժեքով, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ քանակային 57.4 մլն գործարքով կամ 12.1%-ով, իսկ արժեքային՝ 1 տրլն 284.5 մլրդ ՀՀ դրամով կամ 15.1%-ով: Այդ թվում՝ միայն ՀԴՄ գործարքների տվյալներով 2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել է 497.2 մլն գործարք՝ 2 տրլն 080.9 մլրդ ՀՀ դրամ արժեքով, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ քանակային 48.0 մլն գործարքով կամ 10.7%-ով, իսկ արժեքային՝ 153.9 մլրդ ՀՀ դրամով կամ 8.0%-ով:

Կոմիտեն նաեւ տեղեկացնում է, որ 2024 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել է 107.9 մլն անկանխիկ գործարք՝ 642.1 մլրդ ՀՀ դրամ արժեքով, ինչը եւս գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ քանակային 49.9 մլն անկանխիկ գործարքով կամ 86.3%-ով, իսկ արժեքային՝ 197.4 մլրդ ՀՀ դրամով կամ 44.4%-ով:

Միաժամանակ, կոմիտեն հայտնում է, որ վերը նշված ցուցանիշներում, համադրելիության սկզբունքը պահպանելու համար չի ներառվել տաքսի ծառայությունների գործարքների վերաբերյալ տվյալը, որը սեպտեմբեր ամսին կազմել է 6.9 մլն գործարք, 8.7 մլրդ ՀՀ դրամ արժեքով, որից անկանխիկ՝2.4 մլն գործարք՝3.4 մլրդ ՀՀ դրամ արժեքով:

Fastex

ՄԱՍՆԱԿՑԵԼ Է Token2049 ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

Ս.թ. սեպտեմբերի 18-19-ը «Ֆասթեքսը» մասնակցել է Սինգապուրում անցկացվող Token2049 միջոցառմանը, որը կրիպտոակտիվների եւ համընդհանուր Web3 ոլորտի իրադարձությունների շարքում ամենահեղինակավոր միջոցառումներից է:

Այն միավորում է այս ոլորտում միջազգային առաջատար կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ստեղծողների եւ մասնագետների, որոնք հնարավորություն ունեն առաջարկելու իրենց նորարարական լուծումները եւ քննարկելու ոլորտի զարգացման միտումները: Web3 ոլորտի ռահվիրաներից Ֆասթեքսը ներկայացրել է Fastex Exchange կրիպտոակտիվների փոխանակման հարթակը, Fastex Card վճարային քարտը, Fastex Wallet-ը, AKNEYE-ը եւ ftNFT հարթակն իր ֆիզիթալ տաղավարներով:

«Ֆասթեքսն» առաջարկում է բազմաթիվ Web3 լուծումներ՝նպատակ ունենալով ամբողջական փորձառություն տրամադրել թվային լուծումների ժամանակակից սպառողին: Էկոհամակարգի բազմաթիվ պրոդուկտները, Web3 ծառայությունները եւ դրամաշնորհային ծրագիրը հնարավորություն է տալիս մասնագետներին գաղափարներն իրականություն դարձնել Բահամուտ բլոկչեյնում: Միջոցառման ընթացքում այցելուները ծանոթացել են բլոկչեյնը որպես ծառայություն (BaaS), կրիպտոակտիվների ցուցակման եւ կրիպտոարժույթների փոխանակման հարթակների ստեղծման ծառայություններին, որոնք միասնաբար բիզնեսը բլոկչեյն տեխնոլոգիաներում ինտեգրելու համար են:

Այս ամենի մասին իր տեսլականով կիսվել է «Ֆասթեքսի» գործադիր տնօրեն Վախթանգ Աբրահամյանը Derypt-ին տված հարցազրույցում. «Ներկայումս էկոհամակարգի կենտրոնացումը ուղղված է ոլորտի իրավական կանոնակարգումներին՝ մասնավորապես շուտով Եվրոպայում ուժի մեջ մտնող MiCA կարգավորմանը, որին մենք ակտիվորեն պատրաստվում ենք, քանի որ ամեն բան շատ արագ է փոխվում եւ պետք է անընդհատ բարելավել առաջարկվող ծառայությունների որակը: Մյուս կողմից անչափ կարեւորում ենք Բահամուտ հիմնադրամի գործունեության շարունակական զարգացումը, որն իր հերթին հիմք է հանդիսանում նոր ապակենտրոնացված հավելվածների ստեղծմանը եւ հետագայում վստահելի գործընկերների ներգրավմանը»:

20.000-ից ավելի այցելու, աշխարհի խոշորագույն լրատվական ընկերությունների կողմից լուսաբանում եւ 300-ից ավելի ներկայացուցիչներ ունեցող Token2049-ը կարեւոր հարթակ էր Ֆասթեքս էկոհամակարգի ներկայացման, նոր գործընկերային փոխհարաբերությունների ձեւավորման եւ ապագայի գաղափարներով զինվելու համար, որոնցով «Ֆասթեքսի» թիմը կվերադառնա եւ կկիսվի հաջորդ հանդիպումների ընթացքում՝ առաջարկելով լավագույն լուծումներն իր ընդլայնվող համայնքին:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տրամադրում է բազմաթիվ հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exձhange փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ տարածքներով: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը բոլոր օգտատերերի համար համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին եւ առկա կանոնակարգերին:

ԲԱՆԿԱՅԻՆ

Fast Shift–ՈՎ QR ՎՃԱՐՈՒՄՆԵՐ՝ 22 000 ՎԱՃԱՌԱԿԵՏԵՐՈՒՄ

Fast Shift-ը վճարահաշվարկային ընկերություններից առաջինը միացավ «Իդրամ» ընկերության բաց QR ենթակառուցվածքին՝ իր օգտատերերին հնարավորություն ընձեռելով Fast Shift բջջային հավելվածով արագ վճարումներ կատարել շուրջ 22 000 վաճառակետերում «Իդրամ»-ի QR կոդի սկանավորմամբ:

Fast Shift-ի գործադիր տնօրեն Իրինա Գասպարյանը նշել է. «Ընկերությունը մշտապես ընդառաջ է գնում օգտատերերի պահանջներին, եւ սա վճարման գործընթացն ավելի ճկուն, արագ ու հարմարավետ դարձնելու եւս մեկ քայլ է: Fast Shift-ը շարունակաբար նպաստելու է Open QR-ի գաղափարախոսության տարածմանը: Մենք կլինենք բաց ու վստահելի գործընկերության եւ հաճախորդակենտրոն գործելաոճի մշակույթն արմատավորելու առաջատարներից», - ասել է նա:

Fast Shift ընկերությունը վերջերս վերաթողարկել է արագ, անվտանգ, ժամանակակից դիզայնով ու ֆինտեխ լուծումներով հավելված՝ ավելի քան 350 ծառայություններով եւ արդեն ՀՀ ողջ տարածքում շուրջ 22 000 վաճառակետերում վճարումներ կատարելու հնարավորությամբ:

ԹՈՂԱՐԿԵԼ Է ԻՐ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՐՏԸ

«Ֆասթ» բանկի թողարկած բանկային առաջին՝«ԱԿՆ» քարտերը, արդեն հասանելի են բոլոր մասնաճյուղերում: Բանկը գործակցում է ArCA, VISA եւ Master վճարահաշվարկային համակարգերի հետ եւ շարունակում ակտիվ աշխատել, որպեսզի հաճախորդներն ստանան սպասարկման լավագույն պայմանները: Այս պահին հասանելի են «ԱրՔա», «Կլասիկ», «Վիզա կլասիկ», «Վիզա գոլդ» եւ «Վիզա ինֆինիտ» քարտերը, որոնց ձեռքբերումը հնարավոր է ինչպես շուրջօրյա աշխատող բանկի մասնաճյուղերում, այնպես էլ «Ֆասթ» բանկի հավելվածի միջոցով:

Նոր քարտերն առանձնանում են իրենց յուրահատուկ տեսքով, դրանցում պատկերված են աչքեր, որոնք խորհրդանշում են ապագայի զարկերակն զգալու տեսլականը: «Ֆասթ» բանկի գործադիր տնօրեն Գարեգին Դարբինյանն ընդգծել է, որ յուրաքանչյուր քարտի ստեղծման վրա առանձնահատուկ աշխատանք է տարվել արտիստների կողմից, որպեսզի քարտապաններն իրենց յուրատիպ զգան. «Քարտերի վրա պատկերված ակններն ու գունային լուծումները կառանձնացնեն մեր քարտապաններին: Առաջիկայում հասանելի կլինեն ApplePay եւ GooglePay վճարային ծառայությունները, ինչպես նաեւ նոր քարտատեսակները: Աշխատում ենք ամեն օր՝ ջանալով գերազանցել ժամանակակից հաճախորդի բոլոր սպասումները», - ասել է նա:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՇԱԲԱԹ 2024

ՀԱՄԱՏԵՂԵԼՈՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ

Հոկտեմբերի 1-ին Երեւանում՝ Հայաստանի ազգային դասակերաարահում, մեկնարկել է «Հայաստան. ճարտարագիտական շաբաթ 2024» միջոցառումների շարքը, որն անցկացվում է «Համատեղելով ճարտարագիտությունը, գիտությունը եւ արվեստը» խորագրի ներքո:

«Հայաստան - Ճարտարագիտական շաբաթ 2024»-ը կազմակերպում են «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը եւ Ինժեներական ասոցիացիան՝ պետական, մասնավոր ու միջազգային մի շարք գործընկեր կառույցների եւ ծրագրերի հետ համագործակցությամբ:

Միջոցառման նպատակն է ներկայացնել ճարտարագիտության ոլորտի վերջին ձեռքբերումները, նպաստել Հայաստանում ճարտարագիտական համայնքի զարգացմանը, ինչպես նաեւ խրախուսել միջոլորտային համագործակցությունը: «Հայաստան - Ճարտարագիտական շաբաթ 2024»-ը համախմբում է ոլորտի փորձառու մասնագետներին, ուսանողներին, ճարտարագիտությամբ հետաքրքրվողներին, ինչպես նաեւ ամրապնդում միջոլորտային կապերն ու ստեղծում համագործակցության նոր ուղիներ:

Միջոցառման հանդիսավոր բացմանը ներկա էին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեւորգ Մանթաշյանը, Հայաստանում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան տիկին Նիլակշի Սահա Սինհանը, Հայաստանում Շվեդիայի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Պատրիկ Սվենսոնը, Հայաստանում ԱՄՆ փոխդեսպան պարոն Դեյվիդ Ալենը, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար Կարոլին Գեգինատը, Ինժեներական ասոցիացիայի ղեկավար Արամ Սալաթյանը, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բագրատ Ենգիբարյանը եւ պաշտոնատար այլ անձինք, ոլորտի ղեկավարներ ու ներկայացուցիչներ:

Ողջունելով միջոցառման մասնակիցներին եւ հյուրերին՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեւորգ Մանթաշյանը նշեց, որ նախարարությունը պատրաստ է աջակցել նմանատիպ նախաձեռնություններին, կարեւորեց բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտում աշխատող եւ հաջողություն ունեցող ձեռնարկությունների քանակի ավելացմանն ուղղված ջանքերը: «Հեշտ գործ չէ, բայց մենք ապավինում ենք ձեր տաղանդին եւ ունակություններին: Մենք տեսնում ենք գլոբալ փոփոխություններ, ինչպես նաեւ մեծ պատիվ է այստեղ տեսնել բոլոր գործընկերներին եւ հյուրերին»,- նշեց փոխնախարարը:

«Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամի (EIF) տնօրեն Բագրատ Ենգիբարյանը բացման խոսքում ընդգծեց ճարտարագիտության եւ բարձր տեխնոլոգիաների դերը Հայաստանի զարգացման համար՝ ինչպես տնտեսության եւ արդյունաբերության, այնպես էլ Հայաստանի՝ միջազգային ասպարեզում դիրքավորման տեսանկյունից: «Կարեւոր է գիտակցել այն ազդեցիկ ներուժը, որը ճարտարագիտությունն ու բարձր տեխնոլոգիաները կարող են ունենալ Հայաստանի զարգացման համար: Այս միջոցառումը միավորում է բոլոր կարեւոր շահագրգիռ կողմերին՝ խթանելով նորարարությունը եւ համագործակցությունը: «Հայաստան - Ճարտարագիտության շաբաթ 2024»-ը ոչ միայն մեր առաջընթացի ցուցադրումն է, այլեւ հարթակ է կարեւոր հարցերի բարձրացման, գիտելիքի եւ հմտությունների փոխանակման եւ կայուն զարգացման խթանման համար: Այսօր այս սենյակի ինժեներները վաղվա աշխարհի ճարտարապետներն են, որտեղ նորարարությունն ու հնարամտությունը սահմաններ չունեն»,- նշեց Բագրատ Ենգիբարյանը:

Բացման հանդիսավոր արարողությունից ու ողջույնի խոսքերից հետո տեղի ունեցան պանելային քննարկումներ՝ «Առաջադեմ հետազոտությունների կենտրոն. առաջնորդելով վաղվա արդյունաբերությունը», «Միջոլորտային մտքեր. առաջընթացի նոր ուղիներ», ինչպես նաեւ ներկայացումներ՝ «Հայաստանը որպես խոր տեխնոլոգիաների կենտրոն» եւ «Միավորելով մտքերը. ճարտարագիտության, գիտության եւ արվեստի համադրում՝ նոր դարաշրջանի նորարարության համար» թեմաներով:

Միջոցառման երկրորդ օրը Ինժեներական քաղաքում կներկայացվի ինժեներական տեխնոլոգիաների ցուցահանդես, որի ընթացքում կներկայացվեն շուկայի զարգացումները, Ինժեներական քաղաքի արտադրանքը, ուսանողների աշխատանքները: Ցուցադրություններից հետո ներկաները հնարավորություն կունենան մասնակցելու նորարարական տեխնոլոգիաների կիրառության, կիբեռանվտանգության եւ այլ թեմաներով պանելային քննարկումներին եւ սեմինարներին:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ

«ՔՈ ԱՐՎԵՍՏԸ ԴՊՐՈՑՈՒՄ»

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ «Երեխաների հասուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ը շարունակում է իրականացնել «Քո արվեստը դպրոցում» կրթամշակութային ծրագիրը:

Ծրագրի աշնանային շրջափուլի մեկնարկը տրվել է սեպտեմբերի 25-ին՝ Լոռու մարզի Սպիտակ քաղաքից:

Հանդիպման բանախոսը կոմպոզիտոր, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ Մարինե Օթարյանն էր:

Նախագծի աշնանային փուլի շրջանակում արդեն իրականացվել են երեք հանդիպումներ. երկուսը՝ Լոռու մարզի Դսեղ եւ Գյուլագարակ գյուղերում, մեկը՝ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում: Հանդիպումները վարել են Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի դերասան Նարեկ Բաղդասարյանը, հեղինակ-կատարող, երգահան, բանաստեղծ Վախթանգ Հարությունյանը եւ երգեհոնահար Թերեզա Ոսկանյանը:

«Քո արվեստը դպրոցում» կրթամշակութային ծրագրի շրջանակում 2024 թվականի ընթացքում իրականացվելու են հանդիպումներ Հայաստանի 50 մշակութային գործիչների հետ, որոնց ընտրությունը կատարվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից: Հանդիպումներն անցկացվելու են մայրաքաղաքում եւ ՀՀ բոլոր մարզերում՝ ներգրավելով հանրակրթական դպրոցներում սովորող ավելի քան 4000 աշակերտի:

Հանդիպումներն անցկացվում են ինտերակտիվ ձեւաչափով. երեխաները հնարավորություն կունենան ստանալու ոչ միայն տեսական գիտելիքներ, այլեւ անմիջականորեն կդիտեն տվյալ արվեստագետի ներկայացումը, համերգային կատարումը, մասնակցություն կունենան բանախոսի կողմից տեղում անցկացվող վարպետության դասին, արվեստի նմուշների ցուցադրմանը, ինչը հետագայում կարող է օգնել նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում:

Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում կլինի հարցուպատասխանին նվիրված հատված, որը կնպաստի աշակերտ-արվեստագետ առավել անմիջական շփմանը եւ երեխաներին հետաքրքրող հարցերի պարզաբանմանը:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

Ֆրանսիայում ընթացող Օլիմպիական խաղերում արծաթե մեդալ նվաճած հունահռոմեական ոճի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը (97 կգ) Փարիզում ասել էր, որ կբողոքարկի եզրափակիչ հանդիպումը: Նա դժգոհ է մրցակցությունից, որն իրեն զրկել է ոսկե մեդալից: Արթուր Ալեքսանյանն իր թիմի հետ դիմել էր Լոզանի դատարան, եւ այժմ սպասում են պատասխանի:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ դատարանը մինչեւ սեպտեմբերի 19-ն է ժամանակ տվել երկու կողմերին կարծիքներ եւ բացատրություններ ներկայացնելու համար:

Արդեն հոկտեմբեր ամիսն ենք եւ դեռ հրապարակավ որեւէ նորություն չի եղել: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Արթուր Ալեքսանյանի հոր՝ Գեւորգ Ալեքսանյանի հետ՝ մանրամասներ իմանալու նպատակով, վերջինս ասաց, որ որոշումը երկարաձգվել է մինչեւ հոկտեմբերի 10-ը:

Հավելյալ ժամանակ է խնդրել Աշխարհի միջազգային ըմբշամարտի ֆեդերացիան նախապատրաստվելու համար:

ՄԱԼԻԱՑԻ ՀԱՐՁԱԿՎՈՂԸ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է «ԱՐԱՐԱՏ»

Երեւանի «Արարատը» պայմանագիր է ստորագրել 19-ամյա մալիացի հարձակվող Բադեմ Դիաբիրայի հետ:

Ակումբի եւ ֆուտբոլիստի միջեւ պայմանագիրը ստորագրվել էր սեպտեմբերի 11-ին: Դիաբիրան հանդես է եկել Մալիի պատանեկան հավաքականներում, իսկ «Արարատին» է միանում տեղի JMG Football ակադեմիայի «Գիդարս» թիմից:

Հիշեցնենք, որ այս ակումբի եւ «Արարատի» համագործակցության արդյունքում երեւանյան թիմում են հանդես գալիս նաեւ Մալիկ Ազիզ Բերտեն, Քլինթոն Դոմբիլան եւ Կալիֆալա Մամադու Դումբիան:

Բադեմ Դիաբիրան «Արարատում» կխաղա 14 համարի մարզաշապիկով:

ՌԱՍԻՍՏԱԿԱՆ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Համաշխարհային ֆուտբոլի լեգենդ Ռոբերտո Կառլոսը խոսել է Մադրիդի «Ռեալի» բրազիլացի հարձակվող Վինիսիուսի հասցեին հնչող ռասիստական վիրավորանքների մասին:

«Չեմ կարծում, որ Իսպանիան ռասիստական երկիր է: Ես շատ լավ ճանաչում եմ Վինիսիուսին եւ նրա հանդեպ մեծ համակրանք ունեմ, եւ եթե նա որեւէ սխալ քայլ անի, կբարձրաձայնեմ այդ մասին:

Իսպանիայում հասկանում են, որ Վինիսիուսի մակարդակի ֆուտբոլիստի շնորհիվ Լա լիգան զարգանում է: Վինիսիուսը շատ է տառապում թե՛ դաշտում եւ թե՛ դրանից դուրս: Ես նույնպես խնդիրներ ունեցել եմ Իսպանիայում, բայց ծիծաղում էի դրանց վրա եւ չէի վիրավորում ոչ ոքի: Երբ գնդակով էի լինում, իմ մասին վիրավորական երգեր էին երգում, իսկ ես խաղընկերներիս խնդրում էի ավելի հաճախ փոխանցում կատարել ինձ», - Բրազիլիայի հավաքականի ու «Ռեալի» նախկին պաշտպանի խոսքերը մեջբերում է Marca-ն:

● *Հոկտեմբերի 13-ին՝ ժամը 14:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում կցուցադրվի «Սպիտակաձյունիկը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.000-3.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր չեն կարող օգտվել սոցիալական փաթեթի ծառայություններից: Ո՞ր աշխատողները չունեն նման իրավունք:

Մնի Հայրապետյան (40 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սոցիալական փաթեթը չի տարածվում տվյալ մարմնում սոցիալական փաթեթի շահառուի վերջին վեց ամսվանից պակաս աշխատանքային ստաժ ունեցող անձանց, կես դրույքից պակաս դրույք (նորմալ աշխատաժամանակի 50 տոկոսից պակաս աշխատաժամանակ) ունեցող անձանց, հղիության եւ ծննդաբերության, ինչպես նաեւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող նպատակային արձակուրդում գտնվող անձանց, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա՝ բացառությամբ հղիության եւ ծննդաբերության նպատակային արձակուրդից, մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող նպատակային արձակուրդից, կադրերի ռեզերվից, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից վերադարձած անձանց: Թվարկված անձանց վերջին վեց ամսվա աշխատանքային ստաժը հաշվարկվում է առանց նշված ժամանակահատվածի: Ջինծառայողների դեպքում մեկ զորամասից մեկ այլ զորամաս տեղափոխվելը չի դիտարկվում մեկ այլ մարմնի տեղափոխություն, սակայն այդպես է դիտարկվում հանրապետական գործադիր մարմնի փոփոխությունը (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմ տեղափոխվելը):

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Յուրաքանչյուր աշխատակցի համար սոցիալական փաթեթով նախատեսված գումարը կազմում է 11 հազար դրամ: Սոցիալական փաթեթը ամսական գումար է, որը տարեկան կտրվածքով կազմում է 132,000 ՀՀ դրամ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր են համարվում ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար վճարողներ:

Ջիվան Հակոբյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջ. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճար վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետություն ծխախոտի արտադրանք ներմուծող եւ հանրապետությունում ծխախոտի արտադրանք արտադրող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք: Ծխախոտի արտադրանք ներմուծող քաղաքացիները հաստատագրված վճար վճարող են համարվում 400 հատ սիգարետը կամ սիգարելան եւ 10 հատ սիգարը գերազանցող մասի համար:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարի ընդհանուր գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 15, իսկ մաքսատուրքի հաշվարկային մեծությունը՝ 8.5 տոկոս:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Այսօրվանից մինչեւ հոկտեմբերի 5-ը կանցկացվի «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» գիտաժողովը, որը նվիրված է Հայաստանի ազգային գրադարանի պետական կարգավիճակ ստանալու 105-ամյակին: Գիտաժողովը կանցկացվի՝ ազգային գրադարանի հարկի տակ մեկտեղելով աշխարհի 20 երկրի 64 կազմակերպության շուրջ 100 մասնագետի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +18 + 21
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +22 + 24
Գեղարքունիք	+ 4 + 8 +17 + 20
Լոռի	+ 6 + 10 +18 + 21
Տավուշ	+ 8 + 13 +20 + 24
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +21 + 25

Արարատ	+ 13 + 15 +25 + 27
Արմավիր	+ 12 + 14 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +17 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 27
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
ԼՂՀ	+ 8 + 10 +17 + 19
Երեւան	+16 + 18 + 23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*